ԵՌԱԲԼՈՒՐ

Ուզում եմ հայտնել աշխարհին ի լուր,
Որ Երեւանում կա Եռաբլուր,
Երեք բլուրներ իրար հավասար,
Միասին դարձած գերեզմանասար...

Գերեզմանասար՝ հայորդիներին,
Ովքեր մեր ազգին հաղթանակ բերին,
Փառքով կռվեցին, ետ բերին Շուշին՝
Չար ձեռքով գերված մեր սրտի հուշին...

Մուտքի մոտ, նրանց մեծ պատվի համար,
Կառուցվեց շքեղ մի հաղթակամար,
Աջից բազմաղբյուր, ջինջ, հավերժահոս,
Որից նրանք ջուր չեն խմի, ափսո՜ս...

Կորցրինք որքա՞ն ահել ու ջահել,
Ովքեր ջանացին դիրքերը պահել,
Անհայտ կորցրինք քանի՜, քանիսին
Այն ահեղ տարվա մայիս-հունիսին...

Քանիսը ընկան հերոսի մահով,
Որ նոր սերունդը ապրի ապահով.
Որ կանգնեցնի հուշարձան նրանց,
Ովքեր տիրացան լեռնացքին անանց...

Օմարի լեռնանցք, լեռնանցք անիծյալ,
Որով դժվար է անցնում մարդ-հեծյալ...
Բայց տղաները մեր հերոսացած,
Ասես երկնքից թափով իջան ցած...

Այցելեք, մարդի՜կ, դուք Եռաբլուր,
Այն սրբավայրը հայության հանուր,
Սուրբ շիրիմներին դրեք ծաղիկներ
Վառեցեք խունկ ու բյուրավոր մոմեր...

Այցելեք, մարդի՜կ, դուք Եռաբլուր՜
Ոտքերի ձայնը ձեր տա նրանց լուր.
Իրենց ետ բերած սահման-դիրքերը
Ամուր են պահում հայոց զորքերը...

Սերգեյ Պապյան